ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԵՐԳԵՐ ՈՒ ՀՅՈՒՍՎԱԾՔՆԵՐ

1 ԳԱԼԱՁԻ

Մեր տուռին քովը ժողովիլ են չորս-հինգ
յանգա,
Գուդին բոհրում գուդ ու **թառան** *խուռմա,*
Մեգը դիրոնչի, մեդալը ֆալչի,
Մեգալոնք ալ գալաչի, գալաչի,
Անվերջ, անհադնում, սալթը կալաչի։
Ձարխադա դղաք վարժադուն գեշթան,
Համրանք չին սորվենալ, վիրա գըխաղան,
Մեգը թըռթըռի, մեդալը գոշի,
Մեգալոնք ալ՝ գալաչի, գալաչի,
Անվերջ, անհադնում, սալթը գալաչի։
Ծի արաբայով Ռոստով գեշթանք,
Կալու ադեն, էգեր յոռոխով կգանք,
Մեգ բոշ-բողազ հայ արաբաչի,
Աշտխ սաղ ջամփան՝ գալաչի, գալաչի,
Անվերջ, անհադնում, սալթը գալաչի։
Դինմաշտ-էրմաշտ ձեր-յաշ, ախշիգ-դղա
Մեծ հավեսով գեշթան մութ դեր-մեղա,
Ջունգեշոք էղած, անդաչ-անգաչի,
Դեր-մեղան մոռցած, գալաչի, գալաչի,
Անվերջ, անհադնում, սալթը գալաչի։

2 ԹԽՄԲԽԼԻՆ ԽՐԳԸ

Մինչև հորսագ քուն էղար,
Քունեդ էլար, հաց գերար,
Հաց գերար ու բառգեցար,
Ասպես գարիներ գեցար.
Ծղքեն ինչո՞ւ կանգադ գանիս,
Որ աքրուստի ճար չունիս։
Նախիջևանցոց ձմեռը
Թաթոս և Մաթոս,
Բողոս ու Բեդրոս,
Մեգ Անթիանոս,
Սուրփ Ստեփանոս,
Դոնշնավոր, հարսնիք,
Ջիաֆեթ, հարգինք,
Քեֆեր ու բեհեր,
Ջայեր ու փունջեր,
Գաղանդ, նոր դարի
Կալերդ պարի,
Ջընունդ, մդրդութին,
Անվերջ ուրախութին,
Բարգենանք, ջամալ,
Դունեդում ման կալ,
Խոշիներ էշթալ,
Դարել ու դարվել,
Իննաշք խաղալ,
Վերջը հիվնդնալ,
Անքում գիշերներ,
Բամբասանք, սուդեր՝
Աս ին մեր օրեր։
Ասոնց վերջաբան՝
Շեն փախլախորան։

3 ՔՈՒ ԾԻ ԿՆՈՂԻՆ ԽՐԳԸ

Աչքերը քու ծի,
Ջախեցին ինձի,
Սաղլամի դեղ կնեցի,
Ցաշ իմ, խափեցին։

Առի, դուն պերի,
Հորս, մորս ցուցուցի։
Վնաս չունի, դղաս.
Ասաց իմ բաբաս։

Ադ քու աչքերը
Գըրանան քու աչքերը,
Աս քեզի մեծ խրադ,
Իմացիր հաստադ։

Դասն անգամ չափե,
Մեգ անգամ գըդռե,
Աչքերդ խոշոր պաց,
Որ վերշը շըլան թաց։

4 ՄՈՐ ԳԱՐՈԴԸ

Ժառ-ժառ գոշիգիդ,
Ֆառ-ֆառ կալոշիդ

Մայրդ գարոդ է, իմ սիրելի,
Իմ սիրագան խարիբ Օվանես։
Ջուհա չեքմանիգ,
Բառխըթ ժիլեթիդ
Քու մայրդ գարոդ է,
Խարիբ Օվանես։
Գամար օնքերիդ,
Գանթեղ աչքերիդ
Քու մայրդ գարոդ է,
Խարիբ Օվանես։
Խուճուճ մազերուդ,
Կունդ-կունդ ողբերուդ
Մայրդ գարոդ է,
Խարիբ Օվանես։

Այս երգը հորինված է անցյալ դարի վերջերին Սուլթան Սալա գյուղում։ «Խարիբ Օվաննես»-ը այդ գյուղի զավակ է, բայց աղքատության պատճառով ծնողները նրան տվել են ծառայության Նոր Նախիջևանի վաճառականներից մեկի մոտ, որտեղ նա ունեցել է հաջողություն և հարստացել է։ Գյուղում մնացած մայրը միշտ քաշել է նրա կարոտը և չնայած նրա ապահով կյանքին, նա մոր համար եղել է միշտ ղարիբ։

5 ՄԱՀԼԱՅԻ ԴՂԱՔԸ[1]

Սաբախտան գանոխ գելնինք դեղերես,
Գըլվանանք ծեռքերս, էրեսներս,
Գուդինք թաժա դաք բիդան,
Շիդագ գելնինք, գըվազինք մահլան։

Հոնեն գեշթանք Ջոռչոփին բախչան,
Գըկողնանք, գուդինք թըթու ֆըշնան,
Շունները գելնին, մեր վրան հաչելեն,
Գըփախչինք, գեշթանք Ախսայի գերեն։

Հոն գըփեդինք, գուդինք գըծու մանան,
Անգից գեշթանք Առափին օբան,
Հոն թոփ գըլան սաղ քաղաքի դըղաք
Սաղ ամառը անկորձ, ինգաձ մահլան։

Առչինը գեշթանք Բերբերին բախչան,
Հոնեն թոփ-թոփ գելնինք Օշթա օբան,
Հոնեն գերևնա Սուփ Խաչի գերան։
Գեշթանք, գըմդնունք վանքի բախչան,
Բազ ջուր խմելու գեշթանք մեձ չորվախ,
Լվացվելու գեշթանք Գարուդ տինախ։

Բուլհարը գուդա գանանչ սոխ ու հաց,
Գուդինք, գըխմինք, բերաններս թաց։
Ասկից էդև գըվազինք սալխն գերան,
Գուդինք գձու խըճի ու բոլ գառդամա։

Վազելեն գեշթանք Ջալխուշին տառման.
Հոն իլինք թաթռան, բոլ-բոլ գուդինք ան,
Հեդերս ալ դառնունք փոքրերուն համար։
Հոնեն շիդագ Կոհոդին մեծ տառման,
Գըմդնունք նարա նամ դված բախչան,
Գըփեդինք շադ խաս, ամա խամ սալոր,
Քանի չեշիթ տանձ ու շաֆռան խնձոր,
Ջեբերս իլինք, գըփախչինք քարհանա.
Հոս գընստինք անցնող եղի արաբա,
Գուկանք գենե քաղաք, մեր մահալան։

Մեր դունին քովը խորհուրթ գըդեսնունք,
Վաղը սաբախտան թոփ ըլալ յալին,
Գայնիլ ու սպասել քոպուրին վրան,
Հոնեն էշթալ էզեդին մոյկան։

* * *

Ասբես սաղ ամառ բաղեբաղ գըվազին,
Ուսում, վարժարան, կիրք ու գեֆթեր
Չի դեսնուն աս խեղճ դղաքը անդեր.
Բաբաները աղքատ, հեչ հնար չունին,
Աղաներն ալ հեչ կիգնալ չուզին,
Վերջն ալ գըզարմանան, որ կողեր շադցան։

6 ՈՒՆԱՆ[2]

Սելը էգավ, Ունանին դարավ,
Հարը էդևեն լալեն մնաց,
Մի՛ լար, բաբա, մի լար, բաբա,
Աս քաշաձս քու մեղքդ է.
Օրին մեգ օրը տուն տաշով գանեիր,
Մաշտու քուլթա գունդ գըպերեիր։

Սելը էգավ, Ունանին դարավ,
Մարը էդևեն լալեն մնաց։
Մի՛ լար, մամա, մի՛ լար, մամա,
Աս քաշաձս քու մեղքդ է.
Օրին մեգ օրը խաբ գըլայիր,
Գաթին մեչը ճուր գըխառնեիր։

Սելը էգավ, Ունանին դարավ,
Քուրը էդևեն լալեն մնաց։

---

1 Այս ոտանավորի խոսքերը մեզ տվել է Սահակ Մյասնիկյանը։ Նա դառնօրեն հիշում է, որ ինքը որբ մնալով հոր մահվանից վերջը, մասնակցել է այդ բոլոր «արշավանքներին»։

2 Այս երգը տվել է մեզ Գևորգ Ջալաշյանը։

Մի՛ լար, քուրս, մի՛ լար, քուրս,
Աս քաշաձս քու մեղքդ է.
Օրին մեգ օրը հարսնիք գեշթայիր,
Մաշդու շալը դուն գըպերեիր։

7. ՋՈՌՄԵՆ ԲԱԲԻ ՁՈՐԱՆԻՆ ԵՐԳԸ

Ջոռմեն բարին մեծ ածդիհա,
Ձնվաձ ճեմը չոլի համար.
Հարուր դարի չոլը անցուց.
Մեգ հագ օչխար չըգորուց։
Ծմեռը անցավ, պուքը հալեցավ,
Ջոռմեն բարին չոլ գոչվեցավ.
Ջուհուդ-աառման ծգից օթովը,
Էրգու արաբա աղն ալ քովը։
Գեդինը չոր, տախրո-տախրո,
Օչխարները՝ մաղրո-մաղրո.
Քաղցած կալերը, ընդաձ չոլերը,
Վիրա գըվաղին քեսեքին վրան։
Բառախ շունր առչեն,
Ջոռմեն բարին էդեն,
Ջոխմառ տայախը գոնագը,
Գուշգեն գախաձ խամա-տանագը,
Ջորանները գողերեն,
Մեգալ շունները քովերեն,
Կալերեն վախենալեն,
Քեսեքը գըհանին դեղեն,
Ճոռմեն բարին կալ գըմոշթե,
Սաղ դարին կուլ գըքեշթե.
Կալի մոշթի է վրայի մուշդակը,
Կալի դաշի է կլոխի կդագը,
Կալերուն մահ, կողերուն ահ,
Այսբես է մեր չոբանը անվախ։

Կուլղը կուկա, օչխարը գեր.
Ջոռմեն բարին շեն, դըքշե կեղ.
Ամեն մաշդ գառնե ժեն պարին,
Սողումը գուդե սաղ դարին։

Ճոռմեն պապին Թոփտի գյուղի հայտնի չոբանն էր։ 1900 թվականին նա 105 տարեկան էր, բայց աշխատում էր։ Նա հավաքում էր հազար գլխից ավելի գյուղացոց ոչխարները և վաղ գարնանից մինչև ուշ աշուն արածեցնում հասարակաց դաշտերում։ Նրա ասելով, իր պապն էլ, հայրն էլ եղել են չոբաններ և որ նրա վաշը (օթովը) բերված է Ղրիմից, որը նա պահում է որպես տոհմական սրբություն։ Նա մեռավ 1910 թվականին, մինչև կյանքի վերջն էլ առույգ էր։ Այս երգը անշուշտ ունի իր հեղինակը, բայց գտնել չհաջողվեց։